վիւն սկսումէ սուր ձայնով սուլել «ՀԻՐ-ՀՈՆՔԷ» կամ «ԶՐՔԱՆ ԲԱՅԼԻՔ» ասուած սրտաշարժ եղանակը հովուական սրնգի վերայ, և հօտի առաջն ընկած նշանակեալ տեղն է առաջնորդում, իսկ ցրուած հօտը մի քանի բոպէի մէջ ի մի ժողովուած, զարմանալի կարգապահութեամբ իրանց սրնգահար հովուին են հետևում։

Պ. ազարոս քահանայ Յովսէփեան։

Թիֆլիս։

ԱԶԳԱՅԻՆ.

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԴՊՐՈՅԻՆ ԵՐԵՎԱՆԱՅ.

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՊԱՐՈՆԱՅՑ.

Դպրոցիս վարչութիւնը Ձեզ քաղաքիս բոլոր Հայ հասարակութեան ներկայացուցիչ ճանաչելով, իւր բարոյական պարտքը համարեց ներկայացնել Ձերդ յարգութեանց ոչ միայն դպրանոցիս եռամեայ նիւթական դրութիւնը, այլ և նորա ուսումնական դրութեան եռամեայ համառօտագոյն հաշիւը և այս վերջինը ինձ յանձնեց մատուցանել Ձեզ։ Այստեղ խոստովանում եմ, որ չեմ կարող նոյն իսկ այս երեք տարուայ դպրոցական պարագաները, որոնք ունեցել են մեծ ազդեցութիւն նորա ուսումնական մասի ընթացման և զարգացման վերայ, մանրազնին բացատրութիւններով դնել Ձեր առաջ։ Միայն կաշխատեմ շատ համառօտ կերպիւ յիշեցնել Ձեզ այն գլխաւոր կէտերը, որոնք ներկայ Հոգաբարձութեան օրօք տեղի են ունեցած, մանրամասնութիւնները թողնելով մի այլ յարմարաւոր ժամանակի։

1883 ամի Յունիսին, ստացաւ ներկայ Հոգաբարձութիւնը նախորդ Հոգաբարձութիւնից Դպրոցս եօթ դասարանով, որոց չորսը նախակրթարան և երեքը՝ հիմնական կամ իսկական դպրանոցական դասարաններ էին։ Այդ՝ եօթ դասարաններում կար, այն ժամանակ 193 աշակերտ՝ որոնց 166 ը թոշակաւոր, 27-ը՝ ձրիավարժ։ Աշակերտներից ամենափոքրն էր 7 տարեկան, ամենամեծը 14—15 ամեայ, ինչպէս և այժմ։ Ծխականներում կամ նախակրթարաններում այն ժամանակ, ինչպէս և նորանից առաջ և յետոյ մինչև ցայսօր աւանդվում էին և աւանդվում են այժմ ևս շաբաթական 24 ական դասեր, իւրաքանչիւրը մի ժամ՝ գարնան և աշնան օրերում, իսկ ձմրան՝ 50 ական բոպէի տևողութեամբ։ Հիմնական դասարաններում ժամանակի նոյն տևողութեամբ՝ բայց 30 ական դասեր էին տրվում, այժմ 32 ական են։ Նախակրթարաններում աւանդվում էր։—կրօն (իրրև բարոյախօսութիւն), Հայոց և Ռուսաց լեզու, իրենց վայելչագրութիւններով, թուաբանութիւն, գծագրութիւն, իրաղնութիւն, երգ և երբեմն մարմնա-

մարզութիւն։ Թուս լեզուն միշտ սկսուել է երկրորդ տարուանից՝ այն է՝ Նախակրթարանի երկրորդ բաժնից և միշտ Հայոց լեզուի չափ դասերով։ Մարմնամարզութիւնը եղել է գարնան և աշնան զով օրերում։ Հիմնական դասարաններում՝ գծագրութիւնը և իրաղենութիւնը դարձել է տարրական երկրաչափութեան և բնապատմութեան։ Ուրեմն հիմնականներում առանդուել են և առանդվումեն այժմ ևս 1. Կրօն։ 2. Հայոց լեզու։ 3 Թուս լեզու։ 4. Ֆրանսերէն (երկրորդ դասարանից)։ 5. Հայոց պատմութիւն։ 6. Հայաստանի աշխարհագրութիւն։ 7. Թուսաց պատմութիւն։ 8. Թուսաստանի աշխարհագրութիւն։ 9. Ընդհանուր պատմութիւն։ 10. Ընդհանուր աշխարհագրութիւն։ 11. Տարերք բնապատմութեան։ 12. Թուաբանութիւն։ 13. Երկրաչափութիւն։ 14. Վայելչագրութիւն Հայոց։ 15. Վայելչագրութիւն Թուսաց և Ֆրանսերէնի։ 16. Երգ՝ աղգային և եկեղեցական։ վերջինս ձայնագրութեամբ և 17. Ըստ յարմարութեան՝ մարմնամարզ։

Ցիշեալ բոլոր առարկաներից չորս նախապատրաստական և երեք հիմնական դասարաններում առանդվումէր այն ժամանակ շաբաթական 186—188 դաս։ իսկ ուսման տարուայ ընթացքում՝ 6324 դաս։ այժմ՝ 7548 դաս է առանդվում։ Այս բոլոր դասերը բաժանուած են եղել Տեսչի և ուսուցչաց վերայ՝ որոց վերայ է եղել նաև վերակացութիւնը, որը կատարել են փոխ առ փոխ։ Այս կարգն անընդհատ և հաստատուն պահելու նպատակաւ։ Հոգաբարձութիւնը արդէն եղած ողջ ուսուցչական խմբին վարձեց երեք տարի ժամանակով։ 1883 թ. Սեպտ. ամսին. որք էին՝ 1. Ինձ՝ իբրև Տեսուչ և ուսուցիչ։ 2. Արժ. Մ. քահանայ Տ. Մկրտչեանցին։ 3. Պ. Վ. Ալրոմեանցին։ 4. Պ. Մ. Պանճուլաղեանցին։ 5. Պ. Յ. Գէորգ Բէգլեանցին։ 6. Պ. Բ. Խաչատրեանցին։ 7. Պ. Վ. Մկրտչեանցին։ 8. Պ. Ս. Խաչատրեանցին և 9. այժմ հանգուցեալ Յ. Ղազարեանցին։ Այս վերջինս մեռաւ նոյն թուի Հոկտեմբերի 18-ին և Հոգաբարձութիւնը չկարողանալով յարմարաւոր մի անձն գտնել՝ յանձնեց նորա առարկաները ուսուցչաց խմբին։ 1884 թ. Սեպտ. Պ. Գէորգ Բէգլեանցը՝ ինչ ինչ հանգամանքներից ստիպեալ՝ հրաժարեցաւ։ այդ պատճառաւ Հոգաբարձութիւնը հրաւիրեց Պ. Գէորգ Բունեաթեանցին, Պ. Ա. Արշակունուն և Պ. Ս. Սմբատեանցին։ ուստի բոլոր ուսուցչաց թիւը եղաւ 10-ը։ Նոյն թուի Սեպտ. Հոգաբարձութիւնը Կոնդի թաղում, Ս. Յովհաննէս եկեղեցւոյ գաւթում գտնուած Նախակրթարանը նորից իւր խնամոց տակն առաւ՝ ըստ խնդրոյ ժողովրդեան, ուսուցիչ կարգելով Պ. Վ. Մկրտչեանցին, օգնական տալով նորան Պ. Ս. Բաբայեանցին։ ինչպէս և Ս. Պօղոս Պետրոսի Նախակրթարանը յանձնել էր Պ. Բ. Խաչատրեանցին։ Ընդհանուր կարգադրութեան գործութեամբ թաղական դպրոցները փակուելով նոցա աշակերտներն եկան այստեղ իրենց ուսուցիչներով։ 1885 թ. Սեպտ. Չորրորդ դասարանը բաց անելով, դասարանաց թիւը եղաւ դպրանոցում ութ, այն է՝ չորս նախակրթարան և չորս դպրանոցական դասարաններ։ Նոցա մէջ ուսանումեն այժմ 241 աշակերտ, որոց 166 ը թաշակաւոր են, իսկ 75 ը՝ ձրի։ Այժմ այս ութ դասարան-

ները կատարվում են մի տեսչով և տասն և մէկ ուսուցչով (1885 թ. Սեպ. Հոգաբարձութիւնը հրաւիրեց Պ. Ա. Գալստեանցին, իբրև ուսուցիչ և վերակացու)։ Ուսուցչաց երեքի վերայ է վերակացութիւնը։

Ցընթացս երեք տարուայ, Հոգաբարձութիւնը 266 նոր աշակերտ է ընդունել եղած վերայ՝ դպրանոցիս այլ և այլ դասարաններում, որոց 108 ձրի, իսկ 152 ը թոշակով. միևնոյն ժամանակի ընթացքում դպրանոցիս այլ և այլ դասարաններից դուրս են եկել 137 գրագէտ աշակերտներ, գրաբարագէս՝ նախակրթարանի դասընթացն աւարտելուց յետոյ, որոց 104 թոշակառու և 33 ձրիավարժ. բացի դոցանից՝ Երրորդ դասարանի դասընթացն աւարտել են 12 աշակերտներ և ցանկացողները ստացել են վկայագիր։ Այս վերջիններից ոմանք գնացել, մտել են Ներսիսեան Դպրանոցի Չորրորդ դասարանը. իսկ ոմանք՝ Ս. Էջմիածնի Ճեմարանի Չորրորդը։ Նախակրթարաններից դուրս եկողներից շատերը մտել են քաղաքիս արքունի և մասնաւոր դպրոցները, իսկ շատերն ևս ստիպուած են եղել աղքատութիւնից թողուլ դպրանոցս և մտնել արհեստաւորների և վաճառականաց մոտ աշակերտ։

Երրորդ դասարանի դասընթացն յաջող աւարտողներից ոմանք ուսուցիչ են եղած գիւղական դպրոցներում և այդու պիտանացել իրենց և հասարակութեան։ Նոցանից մէկը այս տարի մեր սրբազանի ձեռամբ քահանայ ձեռնադրեցաւ, որի վարք ու բարքի և հմտութեանը ինքը՝ Սրբազանը, վկայում էր խիստ գոհունակ սրտիւ։ Ներսիսեան դպրանոցի և Ս. Էջմիածնի Ճեմարանի վարչութիւններն ևս միշտ գոհունակ են եղած այստեղից գնացած և իրենց մոտ մնաց աշակերտներից։

Դուք վերևում տեսաք որ նախորդ Հոգաբարձութիւնը յանձնել է ներկայ Հոգաբարձութեանս 166 թոշակաւոր աշակերտաց հետ 27 ձրիավարժ. իսկ ներկայ Հոգաբարձութիւնս այժմ մի և նոյն թուով թոշակաւորաց հետ՝ պէտք է յանձնէ ընտրելի Հոգաբարձութեանդ գրեթէ երեք անգամ աւելի թուով ձրիավարժներ, այն է՝ 75, ուրեմն համարեա թէ երկու թոշակաւորին մի ձրիավարժ է ընկնում։ Նախորդ երկու Հոգաբարձութեան օրով վճիռ կար, որով 10 ը թոշակաւորին մի ձրիավարժ էր տրվում, կամ թէ 15 թոշակաւորից մէկն էր լինում ձրիավարժ։ Նոյն իսկ թոշակաւորների վճարն ևս պակասեցրուց ներկայ Հոգաբարձութիւնն՝ ժողովրդի աղքատութիւնն ինկատի առնելով։ բայց այս հանգամանքը ո՛չ միայն նուազեցրուց թոշակագրամի գումարը, այլ և որը չքաւորների թիւն աւելացրուց դպրանոցումս, և այդպիսով Դպրանոցի ընդհանուր յառաջադիմութիւնը դժուարացաւ։ Ահա թէ ի՞նչու։ Այժմեան աշակերտաց մեծ մասը պատկանում է այնպիսի ծնողաց, որք գրեթէ չեն կարողանում Դպրանոցիս պահանջները գէթ կիսով չափ կատարել. աշակերտներն իրենց ժամանակին չեն կարողանում ձեռք բերել դասագրքեր տետրակներ, գրատախտակներ և ուսման կարևոր այլ և այլ պարագաներ։ Նոքա տանը չունին պարապելու համար յարմարին տեղ, ծնողք չեն կարողանում օգնելու նոցա դասերը

պատրաստելու, այդ պատճառաւ շատերը գալիս են տանից անպատրաստ աւելացրէք սորա վերայ և՝ ոտնամանի, հագուստի և հիւանդութեան պատճառով յաճախակի բացակայութիւնները և մանաւանդ թոշակը չբրելելու համար շուտ շուտ դասերից զրկելով վերադարձնելը, այն ժամանակ կհասկանաք, թէ Հայ ուսուցչի համար ի՞նչ մեծ դժուարութիւններ կան հարթելու, որպէս զի կարողանայ որ և է յառաջադիմութիւն ցոյց տալ և նախ՝ հեռուից գատաւոր եղող՝ խստապահանջ գատաւորներին, քննիչների խայթող լեզուներից ազատուել, և երկրորդ՝ Դպրանոցիս վարչութեան գոհունակութեան արժանանալ։ Ա՜հ, որքան բախտաւոր են այդ զէպքում արքունի դպրոցաց գործիչները։ Սոցա համար վերոյիշեալ հանգամանքները չունին ո՛չ մի նշանակութիւն. բոլոր աշակերտները պէտք է օրէնքի և ուսուցչի պահանջները կատարեն միապէս և առանց բացառութեան, ապա թէ ո՛չ միանգամայն ընդ միշտ կզրկուին դպրոց յաճախելու իրաւունքից. զի ջուր չկայ աղնտեղ և երանի՜ թէ այստեղ ևս չլինէր. օ՜հ, ի՜նչ երջանիկ օր կլինէր այն օրը, բայց որչափ հեռու է ցանկալի օրը։ Հայոց Դպրոցների ուսուցչաց համար, կարողութիւն ունեցող ծնողները տեսնելով զպրանոցիս նիւթապէս տատանեալ դրութիւնը, չեն համոզուած երբէք թէ իրենց որդիքը թողնելով այստեղ՝ կարելի կլինի բանալ և հաստատուն պահել նոցա լիակատար միջնակարգ դպրոցի ուսումն տալու համար։ Չորրորդ, հինգերորդ, վեցերորդ և մինչև իսկ եօթներորդ դասարաններ. այդ հաւատն ու համոզումն չունենալով շտապումեն նախակրթարանի դասընթացն աւարտելուց զկնի հանել և ուրիշ դպրոցներ ուղարկել թէպէտև մեծամեծ զոհողութիւններով։ Այս է պատճառը, որ դպրանոցիս երկրորդ, երրորդ և չորրորդ դասարաններում մնումեն միշտ սակաւաթիւ աշակերտներ միայն, որք բացառապէս չքաւոր են։ Այսպիսիներին իսկ զրկեթէ խնդրանօք ենք պահում, որպէս զի հնարաւոր լինի հետզհետէ բանալ վերին դասարանները։ Բայց ժամանակ է որ հասարակութիւնը աշխատէ ամենայն կերպ բանալ Դպրանոցի վերին դասարանները որպէս զի մի կողմից դպրանոցն իսկապէս օգտակար լինել կարողանայ հասարակութեանը միւս կողմից՝ հաստատուն լինի իւր գոյութիւնը։ ըստ պահանջման օրինաց։ Ահա մօտ 49 տարի է, որ սա բացուած է իբրև Հոգևոր Սեմինարիայ կամ թեմական Դպրանոց, բայց ոչ մի ժամանակ չի կարողացել հասնել այն կէտին, որը պահանջումէ օրէնքը։ Թեմական Դպրանոցը պէտք է բաղկացած լինի եօթը դասարանից, որպէս զի հնարաւոր լինի լիապէս աւանդել առարկաներն այն չափով որ չափով դոքա աւանդվումեն լիակատար թեմական դպրոցներում։ Դպրանոցի այդ դասընթացն աւարտողներն ևս, պետական օրէնքի զօրութեամբ, ստանումեն այն իրաւունքներն և արտօնութիւններն, որպիսին տալիս են արքունի Սեմինարիաներն և լիակատար միջնակարգ դպրանոցները։ Թէպէտ և այս դպրանոցում՝ բացի լատինական և յունական լեզուներից և աստուածաբանական գիտութեան մի քանի մասերից, աւանդվումեն բոլոր այն առարկաներն, յաւելմամբ Հայոց գրաբար լե-

զուի, որպիսիք աւանդվումեն ամենայն երկրի Հոգևոր դպրանոցներում, բայց ո՛չ այն չափով որ չափով աւանդվումեն նոցա մէջ։ Ա՛յսքանը միայն կասեմ որ աւանդուած առարկաները որ չափով էլ որ աւանդվումեն, ըստ ամենայնի համապատասխանեն իրենց նեղբին արժէքով կամ որակով լիակատար թեմական դպրանոցներում աւանդուածներին։ Ա՛յս է պատճառն որ այստեղ չորրորդ դասարան աւարտողն առանց դժուարութեան կարողանում է մտնել Ներսիսեան Դպրանոցի կամ Գէորգեան ճեմարանի հինգերորդ դասարանը, ինչպէս փորձը ցոյց է տուել մինչև հիմա։ Բայց հասարակութեան մէջ կան մարդիկ, որոնք պահանջումեն որ այստեղ չորրորդ դասարան աւարտողն կարողանար մտնել արքունի դպրոցաց հինգերորդը։ Ա՛յդ մարդիկը թէպէտ և բարի է իրենց ցանկութիւնը, բայց իրօք չեն հասկանում, որ անկարելի է այդ ցանկութեան իրագործելը. անկարելի է այն պատճառով, որովհետև դորա իրագործելու համար պէտք է անպատճառ բոլոր առարկաները դաս տրուէին Ռուսաց լեզուաւ և Հայոց լեզուն նոյն չափով, որչափով աւանդվումէ արքունի դպրոցներում, բաց հանել ցուցակի միջից Հայոց պատմութիւնն և Հայաստանի աշխարհագրութիւնը. կրօնը և եկեղեցական երգերը այնչափով աւանդել, որպիսին ընդունուած է արքունի դպրոցներում։ Վերջապէս մեր դրաբար լեզուն՝ որ փոխարինում է լատիներէնին և յունարէնին, և բոլոր վերոյիշեալ զոհարերութեանց փոխարէն դաս տալ լատիներէն և յունարէն. եթէ այսպէս լինէր այլ ևս ի՞նչ հարկաւորութիւն ունէինք մուրացկանութեամբ առանձին դպրոց պահել. պետական դպրոցներն էլ կարող էին մեր ցանկութիւններին լիակատար բաւականութիւն տալ։

Ա՛յ, պարոններ, ամեն ազգերի դպրոցները պէտք է ծառայեն նոյն ազգի գրականութեան և լեզուի ծաղկելուն, պէտք նոյն դպրոցները կրթեն ազգային վարք ու բարքին համաձայն սերունդ։ ապա թէ ո՛չ՝ նոքա չեն կարող լինել ազգային, այսպէս պիտի լինի և այս թեմական դպրանոցը։ Ես համոզուած եմ և միանգամայն հաւատացած՝ որ եթէ Երևանայ հասարակութիւնը կարողանար լաւ ըմբռնել այս հիմնարկութեան բուն նպատակը՝ որ է տալ ամենայն կոչման և դասի պատկանող Հայ մարդուն իւր մայրենի լեզուով միջնակարգ դպրոցի լիակատար կրթութիւն և գիտութիւն, հանդերձ պետական լեզուի հմտութեամբ և այդպիսով ընդունակ անել աւարտողին ազնիւ մարդ, ազնիւ ծնող և ազնիւ քաղաքացի լինելու մի կողմից. իսկ միւս կողմից լաւ քահանայ, ժողովրդական դպրոցի լաւ ուսուցիչ, բանիմաց վաճառական, ինքնուրոյն կրթուելու և յառաջ դիմելու պայմանները ձեռք բերած անձի, եթէ, կրկնումեմ՝ այս բարիքն, որ դպրանոցիս բուն նպատակն է՝ հասկանար Երևանայ Շարգելի հասարակութիւնը, այն ժամանակ ամենայն միջոց գործ պիտի դնէր այս նիւթական մուրացկանութիւնից ազատել սորան և սա կլինէր նոյն հասարակութեան բարոյական և մտաւոր բարձրութեան մի մշտնջենաւոր և անուրանալի ապացոյց, առհաւատչեան։

Թո՛ղ լաւ հասկանայ Երևանայ պատուելի հասարակութիւնը, որ այս դպրանոցի լուծելու խնդիրը կամ նպատակը չեն կարող ո՛չ մասնաւոր անձանց և ոչ էլ արքունի դպրոցները լուծել, իրագործել. այդ անհնարին է, ինչպէս և սորան անհնարին է նոցա նպատակին ծառայել և նոցա լուծելի խնդիրը լուծել.

Ես՝ իբրև Տեսուչ այս դպրանոցիս շարունակ տասը տարի այս համոզմամբն և այս հաւատով եմ կատարել Դպրանոցիս ուսումնական մասը. այս բանումը համաձայն է եղած ինձ հետ դպրանոցիս ամենայն ժամանակուայ Հոգաբարձութիւնը և ուսուցչական խումբը. Այս համոզման պտուղն էր, որ անցեալ տարի ուսուցչական խմբին կարելի արաւ պարտաւորութիւնից դուրս յանձն առնուլ չորրորդ դասարանում աւանդուող շաբաթական 32 դասերից՝ 19 դասը ձրի աւանդել, որով և հնարաւոր եղաւ չորրորդ դասարանի բանալը. Անկեղծ հաւատով, յուսով և սիրով տասը տարի շարունակ իմ կարողութեանս չափ ծառայելով այս ազգային հիմնարկութեան կրբաբնմաղթեմ վերին Նախախնամութիւնից, որ այսուհետև եկող Հոգաբարձութիւնը ուսուցչական խումբը և մանաւանդ նոր Տեսուչը լինին աւելի մեծ ուժերով և աւելի մեծ բարոյական զօրութեամբ օժտուած, որպէս զի կարողանան արդիւնաւոր կերպով սորա թերութիւնները լրացնելով. շարունակեն աւելի ևս յաջողութիւններով ի գլուխ հանել ազգային կրթութեան գործի այն բաժինը. որը վիճակուած է այս դպրանոցիս. Տայ Աստուած Ձեզ՝ պատգամաւորացդ, կարողութիւն ընտրելու այնպիսի Հոգաբարձուներ, որ կարողանան իրենց պաշտօնի ընթացքում ոչ միայն եղածները բարւոքելով պահպանել այլ և կարողանան բաց անել դպրանոցի Ե. Զ. և Է. երրորդ դասարանները ի փառս Աստուծոյ, յօգուտ Ազգիս և Պետութեան. այս է ահա իմ միակ ցանկութիւնը և սա կլինի բոլոր կեանքումն իմ ամենամեծ մխիթարութիւնը, ո՛ւր որ էլ լինիմ՝ և ինչ էլ որ լինիմ՝.

ԾԱԽՔ ԵՒ ՄՈՒՏՔ ԹԽՄԱԿԱՆ ՀՈԳ. ԴՊՐԱՆՈՑԻ ԵՐԵՒԱՆԱՑ 1876 — 1880 ԱՄՒ.

	1876 — Մուտք	5248	51 %
	Ծախք	2987	44
Մնայ առ մէկն Յունվ.	1877 ամի	2261	7 %
	Մուտք	8763	76 %
	Գումար մտից	11024	84 %
	Ծախք	3281	41
Առ մէկ Յունվ.	1878 ամի մնաց	7743	43 %
	Մուտք	7004	40
	Գումար մտից	14747	83 %
	Ծախք	5303	95
Առ մէկ Յունվ.	1879 ամի մնաց	9443	88 %

Մուտք	3664	62
Գումար մտից	13108	40 /.
Ծախք	2901	17
Մնաց	10207	23 /.

Եր՚Ա՚Ն. Ա. Բէգ - Նազարեան.

11 Մայիսի 1886 ամի

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Մոսկովարնակ Ատրախանցի բարեպաշտ Տիկին Հռիփսիմէ Կազաչկեան ի Նուէր Մայր Աթոռոյս և ի գործադրութիւն Վեհափառ Կաթուղիկոսի ուղարկել էր մի զոյգ ասղնեգործ հողաթափ.

Արժ. Գրիգոր Քահ. Բարաքելեան Գանձակեցի ի Նպաստ Ճեմարանի իւր խոստացած տարեկան հինգ ռուբլի Նուէրը մատոյց Սինոդին. Ատուած վարձահատոյց լինի երկուսին ևս.

Շնորհակալութեամբ ստացանք

Ա. «Զրկանքի զոհ. թատերգութիւն չորս գործողութեամբ, գործ Էմին Տէր Գրիգորեանի. գինն է 80 կոպ.

Բ. Վիքտոր Հիւգոյի Կլոդ - Գեօ, թարգմանութիւն Աղէքսանդր Արէլեանցի. գինն է 20 կոպ.

Գ. Բարերարութիւնն այսպէս պէտք է և Ջոն - Տեններ, թարգ. Պետրոս Տէր Յովհաննիսեանց. գինն է 15 կոպ.

Դ. «Գաղտնիք Ղարաբաղու» հեղինակութիւն Ապրէսի Բէկնազարեանց, հրատարակութիւն Պ. Առաքել Ծատուրեանցի.

Ե. Առակագիրք, ինքնագիր և թարգմանածոյ առակներ և երգեր ժողովրդական լեզուով գրուած, Ա. Բահաթրեանց. գինն է 50 կոպ.

Զ. «Լուսանման» (հին գրոյց) գրեց Օր. Շուշանիկ Շամքորեանց գինն է 40 կոպ. վաճառվումէ ի Նպաստ Վաղարշապատու Հայոց Օրիորդաց դպրոցի և ընտանեացն հանգուցեալ Ա. Արարատեանցի.